ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

13 ապրիլ 2022 թվական **ք. Արթիկ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ սուբվենցիոն ծրագրերով Արթիկ համայնքում իրականացվող ծրագրերի նախագծերի հանրային բաց քննարկման

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 11:00-ին:

Ներկա էին՝

Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալներ, խորհրդականներ, համայնքապետարանի աշխատակիցներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարում էր Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ հանրային քննարկման պատասխանատու Արթիկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա. Հարությունյանը: Նա ներկայացրեց, որ սուբվենցիոն ծրագրերի ընդհանուր արժեքը կազմելու է մոտ 1 մլրդ է: Համայնքի կողմից ներդրվող գումարը համայնքի բյուջեի մոտ 65 % է կազմում: Առանձին-առանձին ծրագրերի համար համայնքի ներդրումը կազմելու է 25-55 %,իսկ պետության ներդրումը կազմելու է 45-75%՝ համաձայն ՀՀ կառավարության որոշման:

Հանրային լսումների օրակարգում ընդգրկված ծրագրերը ընդհանուր գծերով զեկուցեց Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի, արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանը:

1.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Տուֆագործների և Թամանյան փողոցների ասֆալտապատում,

2.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի <<Արթիկի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգում,

3.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի թվով 7 բազմաբնակարան շենքերի (Աբովյան 20, Աբովյան 21, Տոնականյան 24, Տոնականյան 33, Իսահակյան 19, Լմբատ 1, շենք 13, Լմբատ 2, շենք 36) տանիքների վերանորոգում,

4.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Կամոյի և Աղաքարյան փողոցների տուֆ քարով սալապատում,

5.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի Յուրի Գագարինի անվան զբոսայգու և Բարեկամության զբոսայգու բարեկարգում,

6.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի կենտրոնական հրապարակի ասֆալտապատում և հարակից Գարեգին Նժդեհ, Տոնականյան, Անկախության, Աբովյան, Չարենցի, Բաղրամյան փողոցների մայթերի բարեկարգում:

7.Արթիկ համայնքի Արթիկ քաղաքի լուսավորության ցանցի ընդլայնում(Գր. Նարեկացի, Շիրակացի և այլն):

Նիստը վարող Մ. Մովսիսյանը ներկայացրեց սուբվենցիոն ծրագրերի նախագիծն ընդհանուր գծերով:

Արթիկ համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Հարությունյանն առաջարկեց սկսել հարցադրումները:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

1. Համայնքի Փանյան փողոցի բնակիչ Մարինե Երիցյանը հարցրեց, թե հնարավոր է իրենց փողոցը լուսավորել և բարեկարգել:

Մ. Մովսիսյանն ընդունեց առաջարկը և պատասխանեց, որ համայնքապետարանի համապատասխան բաժնի մասնագետները կանցկացնեն դիտարկումներ նշված փողոցում փողոցային լուսավորության անցկացման համար: Նիստը վարող Ա. Հարությունյանը հավելեց, որ ճանապարհի բարեկարգման հարցն առայժմ հնարավոր չէ ներառել սուբվենցիոն ծրագրում:

2. Համայնքի բնակիչ Արմեն Երիցյանն իր բացասական կարծիքը հայտնեց փողոցների բարեկարգման ծրագրերին՝ տուֆ քարով սալապատման միջոցով:

Արտակ Հարությունյանը ներկայացրեց, որ տոֆ քարով սալապատվում են համայքի երկրորդական փողոցները, ոչ մի գլխավոր փողոց սալապատման միջոցով չի վերանորոգվելու, բացի այդ այստեղ ֆինանսական գործոն կա. սալապատման արժեքը կրկնակի անգամ էժան է ասֆալտապատումից: Իսկ դիմացկունությունը կախված է քարի որոկից, եթե կարծր քարատեսակ է, մոտ 15 տարի փողոցի բարեկարգ վիճակը կպահպանվի: Բացի այդ ծրագրի իրականացման ժամանակ օգտագործվում է տեղական հումքը:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը նշեց, որ համայնքի բյուջեի մոտ 65%-ը ներդրվելու է համայնքի ենթակառուցվածքների բարեկարգման ծրագրերի մեջ:

3. Համայնքի բնակիչ Ագապի Դալաքյանը հնչեցրեց բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման հրատապությունը, թեկուզև տուֆ քարով սալապատման միջոցով: Նա նաև առաջարկեց բազմաբնակարան շենքերի բակերում աճած բարձր ծառերի էտ կազմակերպել, բացի այդ այդ բարձր ծառերը խալխլում են բազմաբնակարանների հիմքերը

Համայնքի ղեկավարի տեղակալ Ա. Հարությունյանը նշեց, որ հարցը տեղին է: Բակերում խաղահրապարակների տեղադրում սուբվենցիոն ծրագրերով նախատեսված չէ, բայց համայնքի բակային մասերում խաղահրապարակների տեղադրում համայնքային բյուջեով կիրականացվի: Սուբվենցիոն ծրագրով նախատեսվում է Արթիկի թիվ մեն մանկապարտեզի շենքի նորոգում, որտեղ համայնքի ներդրումը լինելու է 25%:

4. Համայնքի բնակիչ Ագապի Դալաքյանն առաջարկեց համայնքի բակային մասերում ցանկապատերով առանձնացրած հողատակտորները, որոնք չեն մշակվում ու վերածվել են անմշակ աղբակույտերի, հարթեցնել և գոնե թե դարձնել բացօթյա ավտոկայանատեղիներ:

Մ. Մովսիսյանը այս հարցի առթիվ հավելեց, որ երեխաների ժամանցը կազմակերպելու համար սուբվենցիոն ծրագրերում ընդգրկված է Արթիկի երկու զբոսայգիների բարեկարգումը: Իսկ բակային մասերում յուրաքանչյուր 4-5 բազմաբնակարան շենքերի համար կառուցվելու է խաղահրապարակներ: Առաջիկա տարիների ընթացքում կուսումնասիրվեն ազատ տարածքները և ապօրինի զավթած տարածքները, կապամոնտաժվեն այդ կառույցները և տեղում կստեղծվեն համայնքի բնակիչների համար ժամանցի բացօթյա հրապարակներ:

5. Համայնքի բնակիչ Ալինա Մանուկյանը հարցրեց, թե հնարավոր է արդյոք Արթիկում նոր մանկապարտեզ կառուցել:, նաև առաջարկեց մանկապարտեզների բակերում տեղադրել մանկական խաղահրապարակներ:

Համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Հարությունյանը պատասխանեց, որ Արթիկի թիվ 6 հիմնական դպրոցի թաղամասում նոր մանկապարտեզի կառուցման ծրագիրը կառավարությունը հաստատել է, համայնքն էլ կատարել է հողհատկացումը:

6. Համայնքի բնակիչ Արմեն Երիցյանն առաջարկեց Արթիկի Յու. Գագարինի անվան զբոսայգում տեղադրել բացօթյա մարզական խաղահրապարակներ:

Առաջարկությունը ընդունվեց նիստը վարողի կողմից:

7. Համայնքի բնակիչ Արարատ Աղաջանյանը առաջարկեց քաղաքի մուտքի մոտ, Ս. Դավիթ փողոցի վրա արագ երթևեկությունը կանոնակարգելու համար տեղադրել արհեստական խոչընդոտներ:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը պատասխաեց, որ Արթիկում սահմանվելու է պարեկային աշխատակիցների կողմից մշտական հսկողություն:

8. Համայնքի բանակիչ Արարատ Աղաջանյանը դժգոհեց ֆուտբոլի դպրոցի մարզիկների համար տարրական պայմանների բացակայությունից:Նա խնդրեց մարզիկների համար կառուցել հանդերձարան:

Ա. Հարությունյանը պատասխանեց, որ հովանավոր է գտնվել, ով քաղաքային մարզադաշտի բարեկարգման համար ներդրումներ է ուզում կատարել: Մենք մեր կողմից կներկայացնենք նաև այս առաջնահերթությունը:

9. Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը հարցրեց, թե ինչ տեսք է ունենալու զբոսայգիները, ինչու նախագծերը չեն ներկայացված հանրային քննարկման մասնակիցներին:

Նիստը վարող Ա. Հարությունյանը ներկայացրեց, որ զբոսայգիների կառուցման համար մրցույթ դեռևս հայտարարված չէ, ընդամենը նախագծային աշխատանքների համար է մրցույթ հայտարարված:

10. Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանն առաջարկեց հետագա հանրային քննարկումներին ներկայացնել շահառու փողոցների քարտեզները և ներկայացնել հանրային քննարկման մասնակիցներին:
Առաջարկությունն ընդունվեց նիստը վարողի կողմից:
11. Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը հարցրեց, արդյոք հանրային քննարկումը միայն Արթիկ քաղաքին են վերաբերվում: Արդյոք գյուղական բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերով աշխատանքներ լինելու են և հանրային քննարկումներ կազմակերպվում են:
Զարգացման ծրագրերի պատասխանատու Մ. Մովսիսյանը ներկայացրեց, որ վարչական բնակավայրերում սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ հանրային քննարկումները վարչական ղեկավարներն են կազմակերպում, արդեն իսկ կազմակերպել են:
Հանրային քննարկամն մասնակից Ա. Նահապետյանը հարցրեց, արդյոք զբոսայգիների կամ Ազատության հրապարակի վարեկարգման ծրագրում նորարարական լուծումներ նախատեսվում են:
Ա. Հարությունյանը դրական պատասխանեց հարցին: Նա նշեց, որ նախագծային աշխատանքներ իրականացնող կազմակերպությանը կներկայացվի հանրության, կարծիքն ու պատկերացումները, ճարտարապետական բաժնի մասնագետների մոտեցումները և ըստ դրա կնախագծվի բարեկարգվող հատվածների ծրագրերը:

Մ. Մովսիսյանը ներկաներին բացատրեց, որ թեպետ սուբվենցիոն ծրագրերում Արթիկ համայնքի մի շարք հրատապ խնդիրներ սուբվենցիոն ծրագրերում չեն ընդգրկվել, բայց և այնպես այդ հարցերը համարվում է համայնքի համար առաջնահերթ խնդիր, դրանք կլուծվեն համայնքային միջոցներով, օրինակ նման խնդիր կա Արթիկ քաղաքի Լմբատ թաղամասի կոյուղու հետ, ինչի պատճառով համայնքի բնակիչների սևահողերը վերածվել են ճահիճների, գարշահոտություն է տարածվում և շուտով տեղական իշխանությունները միջոցներ կձեռնարկեն հարցին դրական լուծում տալու ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Մակեյանը կոչ արեց ակտիվորեն մասնակցել համայնքի զարգացման գործընթացներին, ակտիվ մասնակցել հանրային քննարկումներին, վստահել տեղական իշխանություններին, լինել պահանջկոտ, և համայնքի բնակչի բարձրացված հարցադրումներն ու խնդիրները կներառվեն օրակարգային հարցերում: Նա շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար:

Նիստը վարող Ա. Հարությունյանն Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի և համայնքի բնակիչների անունից հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը:

Նիստն ավարտվեց ժամը 11:47-ին:

Նիստը վարեց՝

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝
հանրային քննարկման պատասխանատու
Արթիկ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ _____Ա. Հարությունյան

Քարտուղարության, անձնակազմի
կառավարման, SS բաժնի
առաջատար մասնագետ՝ _____Տ. Չարչյան

Հանրային քննարկման առցանց հեռարձակման հղումը՝ https://youtu.be/yBGUETFjg2A

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

ՑՈՒՑԱԿ

Արթիկ համայնքի ղեկավարի կողմից 2022 թվականի ապրիլի 13-ին կայացած ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված՝ սուբվենցիոն ծրագրերով Արթիկ համայնքում իրականացվող ծրագրերի նախագծի վերաբերյալ հանրային քննարկման մասնակիցների

13.04.2022 թ. ժամը 15:00-ին

Արթիկի համայնքապետարան

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	Ստորագրությունը
1	Հերիկ Սահակյան	093-59-51-26	հաշվապահ	
2	Հերմինե Թեքեջյան	077-51-40-69	բոժոյկ	
3	Ելենա Ֆանտազյան	077-90-72-72	վաճառող	
4	Մարիետ Հարությունյան	098-27-50-68	գրադարանավարուհի	
5	Դավիթ Գևորգյան	077-05-36-52	ժամադրարար	
6	Արմեն Հակոբյան	055 745841	ոստիկան	
7	Էդգար Ղազարյան	077 457173	ոստիկան	
8	Հասմիկ Գրիգորյան	077 753177	գրադարանավար	
9	Վարուժան Հակոբյան	094-118-470	գրադարանավար	
10	Հասմիկ Հարությունյան	077-90-32-76	մատենավար	
11	Մարգարիտ Խաչատրյան	094-50-40-85	բիբլիոգրաֆ	
12	Լիլիթ Հովսեփյան	077-04-87-00	բիբլիոգրաֆ	
13	Գրիգորի Հազարի	077-53-63-01	բիբլիոգրաֆ	
14	Լիլիթ Հակոբյան	077-30-1951	գրադարանավար	
15	Բաղդասարյան Գայանե	094-43 02-43	գրադարանավար	
16	Հարությունյան Սիրանուշ	093-51.99.05	գրադարանավար	
17	Գրիգորյան Վանուշ	094-52-10-03	Ֆ/ք մարկետինգ	
18	Հրանտ Մովսիսյան	094 821551	[illegible]	
19	Հայրապետ Սանդրյան	093 36 36 38	[illegible]	
20	Ներսես Հովհաննիսյան	093-07-50-55	[illegible]	
21	Գևորգյան Հասմիկ	072-79-33-04	[illegible]	
22	Գրիգորյան Հայրապետ	098-500-788	[illegible]	

23	[illegible]	093 74 72 24	[illegible]	[illegible]
24	[illegible]	093 068-062	[illegible]	[illegible]
25	[illegible]	098 10 97 85	[illegible]	[illegible]
26	[illegible]	0-94-25-66-28	[illegible]	[illegible]
27	[illegible]	99-11-70-11	[illegible]	[illegible]
28	[illegible]	093·67·37·00	[illegible]	[illegible]
29	[illegible]	094-58 37 70	[illegible]	[illegible]
30	[illegible]	093-02-14-06	[illegible]	[illegible]
31	[illegible]	093-58-83-31	[illegible]	[illegible]
32	[illegible]	093·71·38·3	[illegible]	[illegible]
33	[illegible]	098-56-56-06	[illegible]	[illegible]
34	[illegible]	077-772-102	[illegible]	[illegible]
35	[illegible]	055-63-71-85	[illegible]	[illegible]
36	[illegible]	093-00-22·53	[illegible]	[illegible]
37	[illegible]	093-12-30-10	[illegible]	[illegible]
38	[illegible]	093 40 40 36	[illegible]	[illegible]
39	[illegible]	098989868	[illegible]	[illegible]
40	[illegible]	072 272 372	[illegible]	[illegible]
41	[illegible]	077 852021	[illegible]	[illegible]
42	[illegible]	077-716-713	[illegible]	[illegible]
43				
44				
45				
46				
47				
48				
49				
50				
51				
52				
53				